

22 MAY 2009

Հ. Ա. Խ. 2.

ՔԱՂ. ԼՈՒՍՎԱՐՔՈՐՈՒԹՅԱՆ ԳԻՒ. Վ. ԱՐԶԱԿԻԹՅԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՅՆ Բ.

025

8-52

Ա. ՅԻԿՈՒԼԵՆԿՈ

# ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԹԱՐԳանական պահության մեջ ԹԱԳԻԱՆՈՒՅՆ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - № 62.

Եկեղիք - 1933.

01 FEB 2014

Տրեստի առաջին Տպարան



## ԳՐԱԴԱՐԱՆԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Գրադարանին կյանք ու հոգի տվողը գրադարանապետն եւ Լավ գրադարանապետը, ինչքան ել քիչ զիրք ունենա, ավելի շատ բան կարող եւ տնել, քան թե դանդաղկոտ ու անշնորք գրադարանապետը, յեթե անդամ վերջինս իր ձեռքի տակ ունենա տասնյակ հազարավոր դրամ: Յուրաքանչյուր գրադարանապետի գլխավոր ձգտումը պիտի լինի այն, վոր իր գրադարանից ոգտվեն վոչ միայն յերեխաները, աշակերտներն ու ծառայողները, այլ և գյուղացին ու բանվորները, այսինքն այն մարդիկ, վորոնց նախկին կառավարությունը հեռու յեր պահում թե զիտությունից, թե զրբից: Հենց այդպիսի ընթերցողի պիտի վորոնի գրադարանապետը ամեն տեղ և ամեն ժամանակ: Նա չպետք է ձեռքը ծալած նստի ու սպասի, վոր ընթերցողները դան իրա մատ, այլ անընդհատ պրոպագանդի միջոցով գեղի գրադարանը պիտի գրավի այդ մարդկանց, վորոնք իրենց կյանքում վոչ մի զիրք չեն կարգացել: Գրադարան ապետի ընկերիցմեկն ել այն պիտի լինի, վոր կարդացած գրքի ու ընթերցողների կյանքի մեջ սերտ կազ հաստատվի, վարպեսզի զիրքը իրոք դառնա հատու զենք պրոլետարիատի ձեռքին մի նոր և ավելի բարեկեցիկ կյանք նվաճելու համար: Ահա այն մեծ խնդիրը, վոր պիտի լուծի գրադարանապետը:

Քործի սկիզբը պիտի լինի պրոպագանդը գրադարանի և լավ գրքի մատին: Դրա համար նախ և առաջ պիտի հայտարարել ի գիտություն ամենքի, վոր այս ինչ տեղը բացվել և գրադարան և գրքերը արվում են այս ինչ ժամերին:

Գերադասելի յե, վոր գրադարանի մասին յեղած հայտաբարությունը լինի գույնզգույն և պատկերագարդ՝ բոլորի ուշադրությունը գրավելու համար։ Այսուհետեւ պիտի կախել ամենալավ գրքերի ցուցակը։ Գրքերը պիտի բաժանված լինեն ըստ բովանդակության և յուրաքանչյաւր խումբ գրքերի համար, համաձայն նրանց բովանդակության, պիտի կազմել տուննելին պլաշտառագարարություն։ Որինակ՝ Ռուսաստանի հեղափոխական շարժումների մասին պիտի լինի գրքերի մի ցուցակ, ֆրանսիական հեղափոխության մասին՝ մի ուրիշ ցուցակ, կոժմունիզմի մասին՝ յերրորդ ցուցակ, հողային հարցի մասին՝ չորրորդ ցուցակ և այլն։ Լով կլինի, վոր այլ պլակտոնները զարդարված լինին համապատասխան պատկերներով՝ հին ամսաթերթերից կամ այլ տեղերից վերցրած։

Այդ տեսակ պլակատները գրավում են ընթերցողի ուշադրությունը և տրամադրում նրան լավ գրքեր կարդալու։ Փորձը ցույց է տվել, վոր միանդամայն անսպասելի հետեւնքներ են ստացվում նման պլակատներից։ Սկզբում պետք է խույս տալ մեծարանակ գրքերի ցուցակներից, բավականանալով 8—10 կամ գրանից ել պակաս գրքերի ցուցակներով։ Ծնորքով ու ճաշակով կադամած պլակատները միաժամանակ կազմում են գրադարանի ամենալավ զարդը, իսկ առաջարարակ լույս զարգարած գրադարանը ամենալավ միջոցներից մեկն է ընթերցողին դեպի ինքը գրավելու։

Ուր եւ վոր լինի մի գառախոսություն, համերգ, ներկայացում կամ մի այլ հայտաքույթ, գրադարանապետը պիտի շտապի այնտեղ բացատրելու համար գրքի ու գրադարանի նշանակությունը։ Այդ նա պիտի անի, կախելով ամնա աեղ աղդարարություններ գրադարանի և գրադարանում յեղած հետաքրական գրքերի մասին։

Յեթե դրադարանապետը կարողանա կազմակերպել ընթերցողների ժողովներ, շատ ցանկալի յե, վոր այդ ժողովներում նա զեկուցումներ անի գրքերի մասին կամ պատմի ժողովականներին մի կամ մի քանի մինույն նյութի մասին գրքած հետաքրքրական գրքերի բովանդակությունը։ Դա ամենալավ միջոցն է ժողովը գականացնելու այն հեղինակների յերկերը, վորոնց ընթերցումը կարենը և համարում գրադարանապետը։ Յեթե գրադարանապետը պատմելու շնորք ունի, նա պիտի պատմի իր ունկնդիլներին վոչ միայն գիտական գրքերի բովանդակությունը, այլ և վեպեր, պատմություններ և այլն։ Վորպեսզի գրադարանապետի աշխատանքները՝ ընթերցումների մեջ հետաքրքրություն զարթեցնելու միունակ չկանոն, կարելի յե գրադարանին կից կազմակերպել բարձրաձայն ընթերցումներ։ Դրա համար յեթե զբաղարանի չենքում տեղ չկանի, կարելի յե ողարքել ակումբի շենքից, թեյտանից կամ մի այլ հաստատության շենքից։

Բարձրաձայն ընթերցումների ժամանակ ցանկալի յե, վոր լինեն զրոյցներ, վորոնցից պիտի ովտվի գրադարանապետը իր առաջադրած նպատակների համար։ Գրադարաննին կից պիտի կազմել նաև ընթերցողների խմբակներ հանրություն աշխատանքներ կատարելու համար։ Կարելի յե այդ խմբակների ոգնությումը կազմել շաբաթական աեղեկատուններ զանազան հարցերի մասին, որինակ՝ միջազգային կյանքի նշանափոր յերեսւյթների և աեղական կյանքի յերեսւյթների մասին, պարրերական մամուլում լույս տեսած նշրությունների կամ նոր լույս տեսած զրքերի մասին։ Այդ տեսակ աեղեկությունները շատ ովտակար կարող են լինել նրանց համար, վորոնք նաև ավորություն չունեն կարգալու ըոլորթերթերը և վոչինչ չգիտեն նոր լույս տեսած գրքերի մասին։

Հետղհետե գրադարանապետը իր կազմակերպչական աշխատանքների մի մասը կարող է հանձնել ընթերցողներին, վերոնց մեջ կորող են լինել լավ զեկուցումներ անողներ, շնորհալի պատմիչներ կամ լավ պլակատներ կազմողներ:

Բայց գրադարանապետի ամենամեծ և գլխավոր ջանքը պիտի լինի այս, վոր նա սովորեցնի ընթերցողին, թե ինչպես պիտի կարդալ զերքը: Պիտի ասել վոր շատ շատ քչերը գիտեն թե ինչպես պետք և կարդալ զերքը, վոր նա հուկապես ողուտ բերի ընթերցողին: Սովորաբար կարդացած գրքի բովանդակությունը շատ շուտով անհետանում է ընթերցողի մաքից: Հաճախ մարդիկ կարդում են բազմաթիվ գրքեր, վորոնք վոչ մի հեաք չեն թողնում նրանց գլխում: Այստեղ ե, վոր պիտի ոգնության գա ընթերցողին գրադարանապետը և ցույց տա գիրք կարդալու ամենալավ լեզանակը՝ գրվածքը լավ ըմբռնելու և յուրացնելու համար: Կարդացած գիրքը լավ յուրացնելու ամենալավ միջոցներից մեկն ե՝ պատմելու իշխն կարդացածի բովանդակությունը: Բացի գրանից կարդացած գիրքը լավ ըմբռնելու համար ամեն ընթերցող ինքն իրեն պիտի տա հետեւյալ հարցերը.

1. Ի՞նչ գլխավոր հարցեր են շոշափվում գրքի մեջ:
2. Աւզիդ և արդյոք լուսաբանում հեղինակը այդ հարցերը:
3. Ի՞նչ նպատակ ե ուսեցել հեղինակը գիրքը գրելու:

4. Ի՞նչ տեսակ ընթերցողի կարող է հետաքրքրել այդ գիրքը և ում կարելի յե առաջարկել կարդալու կարելի յե ավելացնել և այս հարցերը.

5. Գրքի բովանդակությունը:
6. Գմանը թե հեշտ լեզվով ե գրված գիրքը:
7. Գիրքը հասկանալու համար հարկավոր և արդյոք ուսնեալ մասնագիտական պատրաստություն:

8. Հետաքրքրական ե կազմած գիրքը թե վոչ:

Այս հարցերի պատասխանը կարող է կազմել մի դեկուցում կարդացած գրքի մասին:

Ընթերցողների ժողովներում արված այդ զեկուցումները ունեն և այն ոգուածը, վոր առաջացնում են մտքերի փոխանակություն և գրանով ավելի ևս նպաստում կարգացած գրքերի լավ ըմբռնելուն: Այդ տեսակետից ցանկալի յե, վոր միենույն գրքի մասին զեկուցանեն մի քանի ընթերցող: Այդ դեպքում յուրաքանչյուր մի հարց լուսաբանվում է զանազան կողմերից, վոր իր հերթին հնարավորություն և տալիս ընթերցողին ավելի գիտակցորեն վերաբերվելու դեպի կարգացած գրքերը:

Յերբ վոր մեկը մի հետաքրքրական զեկուցում ե անում, այդ զեկուցումը պիտի կախել պատից, վոր բռնորդ կարդան: Ընթերցողների ժողովներից դուրս յուրաքանչյուր վոք իր կարգացած գրքի բովանդակությունը կարող է պատմել նաև իր ընկերոջը, քրոջը, յեղբորը:

Հատկապես անգրագետների համար պիտի կազմակերպել առանձին խմբական ընթերցումներ: Մեկը, վոր լավ կարդալ գիտեն, պետք և բարձր ձայնով կարդա մի գիրք կամ լրադիր, մյուսները պիտի լսեն: Ընթերցումից հետո պիտի լինի մժքերի փոխանակություն: Շատերը բարձր կարդացած ժամանակ ավելի լավ են ըմբռնում կարդացածը: Ընթերցաբանում պիտի լինեն որացույց, հանրագիտական և այլ բառաշաններ, քարտեղներ՝ հայաստանի, Ռուսաստանի, Յեկարպայի և ուրիշ յերկրների:

Ամենալուրջ և դժվար գործը գրադարանապետի համար գրքեր առաջարկելն ե ընթերցողներին: Պետք է շնորք և ընդունակություն ունենալ յուրաքանչյուր ըն-

թերցողի առաջարկելու այն դիրքը, վոր ամենից շատ և համապատասխանում նրա հասկացողությանը և պետքերին:

Այդ խնդիրը կարելի յէ հաջող լուծել, յեթե գրադարանապետը կարդացած լինի գրադարանում յեղած բոլոր գրքերը և յեթե նա մոտ ճանաչի իր ընթերցողներին: Սովորաբար գրադարանապետը անկարող և լինում կարդալու գրադարանում յեղած բոլոր գրքերը: Այն ժամանակ նա ամեն ջանք գործ պիտի դոկտորական չուրաքանչյուր բաժանմունքում յեղած ամենաարժեքավոր գրքերին: Գրքերի մասին գեթ մոտավոր գաղափար կազմելու համար անհրաժեշտ և ունենալ գրադարանում այնպիսի հրատարակություններ, վորոնց մեջ պարունակվում են տեղեկություններ գիտության բոլոր ճյուղերին վերաբերյալ գրքերի մասին: Այդպիսի տեղեկություններ, ինչպես և կարդալու համար առաջարկելիք գրքերի ցուցակներ կարելի յէ ստանալ Գլխաքաղուսպարում և Լուսմողկոմի արտադպրոցական բաժնում:

Ընթերցողներին պետք է ծանոթանալ ժողովներում և ընթերցողների հետ ունեցած խոսակցությունների ժամանակ՝ նրանց գրքեր տալիս: Ետո ցանկալի յե, վոր գրադարանապետը ծանոթանա նաև իր ընթերցողների կյանքի պայմաններին և նիստառ կացին, իմանաթե, ինչ աշխատանքներ են կատարում նրանք արհեստանոցներում, տանը և դաշտում: Վորքան մոտ լինի գրադարան նապետը իր ընթերցողներին, այնքան նա լավ կգոհացնի նրանց պահանջը, այնքան հաջող կլինի յուրաքանչյուրին աված գրքի ընարությունը: Յեթե ընթերցողների թիվը այնքան մեծ ե, վոր անհնար և յուրաքանչյուրին անձամբ ճանաչել, այն ժամանակ յերբեմն յերբեմն պետք և կաղմել անկետաներ: Ներքեւում բերված և անկետայի մի ու բիսակ, բայց ամեն անդամ անկետա կազմելիս պետք և

հարժարվել տեղական պայմաններին և համաձայն այդ պայմանների հարցերը կը ճատել, փոխուել կամ նոր հարցեր ավելացնել.

## Ա Կ Ե Տ Ա ԸՆԹԵՐՑՈՂԻ ՄԱՍԻՆ

1. Քանի տարեկան և ընթերցողը:
2. Ինչնի և պարապում:
3. Գոհ և արդյոք իր աշխատանքեց:
4. Ցեղե գեղոհ և, ապա ինչ տեսակ աշխատանք կուզենար ունենալ:
5. Ինչպես և իմացել գրադարանի բացման մասին:
6. Առաջները գիրք կարդացել և թե վոչ:
7. Այն ժամանակ գիրքը գնրտեղից եր վեցնում:
8. Հարժարություն կամ հնարավորություն ունի արդյոք տանը գիրք կարդալու:
9. Վորտեղ և ավելի հարժար գիրք կարդալը տանը թե գրադարանում:
10. Ինչպես և կարդում գիրքը, մաքում թե բարձրաձայն:
11. Որինամ եք արդյոք, յերբ ուրիշը պատմում է իր կարդացածի մասին:
12. Բացի ձեղանից ուրիշներն ել զարդում են արդյոք առ գրքերը, վոր գուք վերցնում եք գրադարանից:
13. Գրում եք արդյոք գիտողություններ ձեր կաղացածի մասին կամ գրքից արտագրություններ անհում եք թե վոչ:
14. Գրքի ընթերցումն ավարտելուց հետո հիշում եք արդյոք ձեր կարդացածը և պատմում եք արդյոք ուրիշին:
15. Որվա մեջ քանի ժամ կարող եք նվիրել ընթերցանության:
16. Կարդում եք արդյոք որաթերթիք:

17. Որաթերթի վմբ բաժինն և ձեզ ավելի հետաքրքրում:

18. Անդամ եք արդյոք վորե և միության, խմբի կամ կուսակցության:

### ԿԱՐԴԱՑԱԾ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

1. Ի՞նչ տեսակ գրքեր ձեզ ավելի յեն հետաքրքրում:

2. Վեր հեղինակներն են ձեզ ավելի դուք գալիս:

3. Դուք և գալիս արդյոք ձեզ այն գիրքը, վոր այժմ կարդում եք:

4. Ձեզ համար գրքեր դուք եք ջոկում թե ուրիշների ղեկավարությամբ եք կարդում:

5. Ի՞նչ եք ուզում, վոր ձեզ գիրքը տա և ինչի՞ համար եք գիրք կարդում:

6. Չի՞ զգում արդյոք, վոր զյուրը մբռնելի և պարզ լեզվով գրված գրքերի թիվը քիչ եւ:

7. Հետաքրքրում են արդյոք ձեզ ձեր մասնագիտության վերաբերյալ գրքերը:

8. Սիրում եք արդյոք կարդալ հասարակական գիտությունների և կոմմունիզմի վերաբերյալ գրքեր:

### ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Ի՞նչ տեսակ գրքեր են պակասում մեր գրադարանում:

2. Գեհ եք արդյոք գրադարանի մեջ գոյություն ունեցող կարգ ու կանոններից:

3. Հարմար ժամանակ և բացվում արդյոք գրադարանը:

4. Դուք ինքներդ գիրք ջոկելու հարմարություն ունեք թե վոչ:

5. Չեյք շանկանա արդյոք ողնել գրադարանապետին դանագան աշխատանքներ կատարելիս:

6. Ի՞նչ խորհուրդ կտայիք, վոր գրադարանից վորքան կարելի յե շատ մարդ կարողանար սկսվել:

7. Ի՞նչ տեսակ բարելավումներ կցանկանայիք, վոր լինելին գրադարանում:

8. Ոգտվում եք արդյոք ընթերցարանից:

9. Հաճախում եք արդյոք ընթերցողների ընդհանուր ժողովները:

10. Հաճախում եք արդյոք գրադարանում յեղած խմբական ընթերցումները, գրույցները, դասախոսությունները, զեկուցումները:

11. Ի՞նչ ոգուած և ավել ձեզ գրադարանը:

### ԳՐՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԱՄԱՐ

Գրադարանի համար գրքեր ընտրելին գրադարանապետը ողիտի ի նկատի ունենա հետեւյալ պահանջները, վորոնց պիտի գոհացում տա գրադարանը:

1. Տալ ընթերցողներին թեկուզ սարբական, բայց անհրաժեշտ տեղեկություններ գիտության բոլոր ճյուղերի վերաբերյալ:

2. Ոգնել ընթերցողին ըմբռնել իրեն շրջապատող կյանքը և ստեղծել նոր կոմմունիստական հասարակակարգ:

3. Ոգնության զալ ընթերցողին բարելավելու նրա առողջականությունը կամ աշխատանքի պայմանները: Դրա համար պետք է —

վոր յուրաքանչյուր գրադարանում անպատճառ լինեն այնպիսի գրքեր, վորոնք բացատրում են, թե ինչ բան և խորհրդային իշխանությունը, ովքեր են կոմմունիստները, ինչպիս պետք ե կազմակերպել մի նոր կյանք և այլն: Պիտք ե ունենալ գրքեր, վորոնք պայմանագրում կրոնական նախադաշտական գործությունների գեմ, գրքեր, վորոնց մեջ դրված և ֆրանսիական և ռուսական յեղափոխությունների սրամմությունը: Յանկալի են նաև վիպական գրքածքներ, վորոնց մեջ նկարագրվում են զա-

նազան գեղաքեր յեղափոխական կյանքից:

Գերադասություն պետք ե տալ այն գրքերին, վարոնք գրված են պարզ ու հսկանալի լեզվով։ Ներկայումս գրադարանների մեծ մասում յեղած գրքերը նրանց համար են միայն, վորոնք բավականաշափ պատրաստություն և ներ ամեն տեսակ գիրք կարդալու։ Գրադարանապետը պետք ե հոգ տանի, վոր նախ և առաջ իր գրադարանում լինի ժողովրդական գրականություն՝ հարմար ու մատչելի բանվորների ու գյուղացիների լույն զանդանականների համար։ Պիտի լինեն գրքեր, վորոնց մեջ պարունակվում են տարբական գիտելիքներ գիտության բոլոր ճյուղերի մասին, որինակ՝ պատմություն, աշխարհագրության, բնագիտության, քիմիայի, աստղաբաշխության, առողջապահության, տեխնիկայի և յեթե կարելի ե, նաև զեղարքեստի մասին։ Իսկ զեղարքեստական գրականությունից ցանկալի ե ունենալ մինչև անդամ ամենափոքր գրադարաններում համաշխարհային նշանակություն ունեցող հեղինակների բոլոր արժեքավոր յերկերը։

Վորագեազի գրադարանը զառնա ընթերցողի ոգնականը, նրա թե ու թիկունքը ամենուրյա կյանքի մեջ, վորք և կարելի ե շատ պիտի լինեն գրադարանում այնպիսի զբոքեր, վորոնք տալիս են տարբական տեղեկություն դյուզատնաեսության, տեխնիկայի նույնական և այլ գործնական գիտելիքների մասին։ Ընթերցողները այդ գրքերից պիտի սովորեն, թե ինչպես պետք ե սապոն յեփել, ծխախոտ մշտեկել, ամեն տեսակ տմանեղին մաքրել և այլն։

Յեթե պատահի, վոր գրադարանապետի ձեռքն ը՝ կոնի մի գրադարան, վոր առաջ պատեկանելիս ե յեղել վոր և ե մասնավոր մարդու կուտ ընկերություն, նախ և առաջ նու պետք ե ջոկի և ուղարկի Գլխադպուփարին բոլոր հին ու անպետք գրքերը, վորովնետե այդ տեսակ

գրքերը միայն ավելորդ բեռն են գրադարանի համար և խանգարում են նրա կանոնավոր աշխատանքներին։

### ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՏԱԸԸ

Գրագորանի կազմակերպությունը առաջնակարգ հշանակություննի։ Գրադարանական գործը պիտի կազմակերպել այնպես, վոր ամենաքիչ ժամանակ կորցնելով կարելի լինի ամենաշատ գործ կատարել։ Վատ կազմակերպված գրադարանը շատ ժամանակ ու յեռանդ ե խըլում գրադարանապետից, հետեւապես նա հնարավորություն չի ունենում վոչ ոգնելու և զեկավարելու ընթերցողներին, վոչ ել ծանոթանալու գրքերին այնչափ, ինչ շափ վոր այդ անհրաժեշտ յուրաքանչյուր գրադարանապետի համար։ Իսկ յեթե շատ պարզ ու հասարակ ձեռվ տարվեն աշխատանքները գրադարանում, այն ժամանակ գործը չի համապատասխանի գրադարանական ներկա պահանջներին, անկարելի կը լինի իմանալ, վորքան և յեղել ընթերցողների թիվը, վորքան գիրք և կարդացվել, վորքան հաջող ե ընթանում գրադարանի գործունեությունը։

150-ից մինչև 200 գիրք ունեցող շարժական գրադարանների համար, պահանջվում ե պարզ ու հասարակ կազմակերպություն, իսկ 1000 կամ ավելի գիրք ունեցող գրադարանի կազմակերպությունը պիտի լինի համեմատաբար ավելի բարդ։

Նախ բացարձնիք, թե ինչպես պիտի կազմակերպված լինի մեծ ու մշտական գրադարանը։

### 1. ԳՈՒՅՔԻ ՄԱՏՅԱՆ

Գրադարանում յեղած գրքերն ու ամսաթերթերը պետք ե գրված լինին մի մատյանի կամ տետրակի մեջ, վոր գրանից հետո կըում ե զույգի մատյան անունը։

Դուքի մատյանը պիտի տողած լինի այնպես, ինչպես  
այդ ցույց և տված 15 յերեսում:

Առաջին սյունյակի մեջ պիտք է նշանակել տարե-  
թիվը և ամսաթիվը, յեթե զիրքը գրված է մատյանի  
մեջ: Յերկրորդ սյունյակի մեջ պիտի նշանակել մատյանի  
համարները ըստ կարգի, յերրորդ սունյակի մեջ պիտի  
նշանակել հեղինակի անունը և այլն: Ծանոթության մեջ  
պիտի նշանակել գըքի պատովելու, փշանալու կամ կոր-  
չելու պատճառը: Յեթե չի նշանակված հեղինակի ա-  
նունը, զինը և այլն, համապատասխան սյունյակներում  
պետք է փոքրիկ գիծ (տիրե) քաշել: Գերազանցելի է, վոր  
լուրաքանչյուր գոքի համար մի տող հատկացվի: Յեթե  
հեղինակի կամ գըքի անունը շատ յերկար է, կարելի է  
նշանակել մատյանում կը ճանապահ, իսկ քաղաքների ա-  
նունը՝ նշանակելիս կարելի է բավականանալ միայն  
սկզբնատառվ, որինակ, Մոսկվա նշանակել Մ. տառվ,  
Թիֆլիս՝ Թ. տառվ, Վենետիկ՝ Վ. տառվ և այլն: Բա-  
ժանմունքների համարները լավ կը լինի նշանակել հա-  
մաձայն տասնորդական սիստեմի, վորի մասին խոռը  
կը լինի ներքեռում.

## 2. ԳՐՔԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Բոլոր գրքերը բաժանվում են 10 մասի կամ բաժան-  
մունքի:

Օ. Ընդհանուր գրվածքներ, այսինքն այնպիսի գր-  
քեր, վորոնք պարունակում են իրանց մեջ տեղեկություն-  
ներ ամեն տեսակի գիտությունների մասին: Մատենա-  
խոսություն: Գրագարանագիտություն: Հանրագիտական  
բառարաններ: Որացույցներ:

Ծանոթ	Առգե
Հագում	
-ուրբագ	
կազմված	
մատոչ	
մագլուկանց բազմություն առաջնական առաջնական	
գործառնությունների անուն, վեր-	գործառնությունների անուն, վեր-
առաջնական առաջնական	գործառնությունների անուն, վեր-
գիւղող	
առը մարտչ	
ուսմանոր	
քուար	
դ մացք	

1. Փիլիսոփայական գիտություններ: Հոգեբանություն:

2. Կրոն: Կրոնի ծագումը: Յեկեղեցու անջատումը պետությունից:

3. Սոցիալական դիտություններ: Սոցիոլոգիա: Քաղաքատնտեսություն: Բանվորական հարց: Հողային հարց, Անարխիզմ, Կոմմունիզմ: Սոցիալիզմ:

4. Լեզվագիտություն: Ոտար լեզուների բառարաններ: Քերականություն հայոց, ոռ սաց և ուրիշ լեզուների:

5. Մատեմատիկա և բնագիտություն: Աստղաբաշխություն: Ֆիզիկա: Բիմիա: Յերկրաբանություն: Կյանքի ծագումը: Կենդանիների և բույսերի ժամանակականություն:

6. Գործնական գիտություններ: Բժշկություն: Տեխնիկա: Գյուղատնտեսություն:

7. Գեղարվեստ: Ճարտարապետություն: Անդրիագործություն: Գեղանկարչություն: Թատրոն: Յերաժշուականություն:

8. Վիպագրություն: Գրականության պատմություն: Բննագատություն: Հրապարակախոսություն:

9. Պատմություն: Կենսագրություն: Աշխարհագրություն:

Բաժանել զրքերը ըստ բաժանմունքների նշանակում և նրանց դասավորել:

Ուրիշ շատ ձևեր կան զրքերը դասավերելու, բայց վերջին ժամանակները թե Ռուսաստանում և թե արտասահմանում ընդունված ե զրքերի դասավորման տասնորդական սիստեմը: Տասնորդական սիստեմի եյությունն այն է, զոր տասը բաժանմունքից յուրաքանչյուրը իր հերթին բաժանվում է տասը յենթաբաժնի, յուրաքանչյուր յենթաբաժնի՝ տասը խմբի և այլն:

Դրան գասավորման համարը համաձայն տասնորդա-

կան սիստեմի դրված և հետեւյալ կերպով: — Նախ դրվում է բաժանմունքը ցույց տվող թվանշանը, հետո աջ կողմեց՝ յենթաբաժնին ցույց տվող թվանշանը: Յեթե ցանկում յենք ցույց տալ նաև խումբը, վորին պատկանում է գիրքը, դարձյալ աջ կողմեց նշանակվում է խումբ ցույց տվող թվանշանը: Արինիակ՝ Արթուր Արնույի գիրքը՝ «Կոմմունայի հանգուցյալները» պատկանում է 9 բաժանմունքին՝ պատմությանը, 4 յենթաբաժնին՝ Յեփրապայի պատմությանը, հետեւալես այդ գրքի համարը պիտի լինի այսպիս՝ 944:

Տասնորդական սիստեմի մեջ թվանշանները սկսվում են 0-ից և վերջանում 9-ով:

Միջակ զրադարձաների համար կարելի է առաջարկել ի գործադրություն հետեւյալ յենթաբաժններն ու խըմբերը:

## 0. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

01. Մատենախոսություն: Գրացուցակներ դրագարանների և հրատարակական ձեռնարկների:

02. Գրադարանագիտություն:

028. Լավագույն զրքերի զրացուցակներ: Աորհուդական լրացողներին:

03. Նանրագիտական բառարաններ:

05. Որացուցներ, տեղեկատու զրքեր:

## 1. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10. Փիլիսոփայություն:

15. Հոգեբանություն:

17. Բարոյագիտություն:

## 2. Կ Ր Ո Ն

20. Կրոնի վիլիսոփայություն: Քըլիսունեական վարդապետություն, Յեկեղեցու անջատումը ու ետությունից:



1. Փիլիսոփայական գիտություններ: Հոդերանություն:

2. Կրոնի ծագումը: Յեկեղեցու անջատումը պետությունից:

3. Սոցիալական գիտություններ: Սոց ոլորիտ: Քաղաքատնտեսություն: Բանվորական հարց: Հողային հարց, Անարխիզմ: Կոմմունիզմ: Սոցիալիզմ:

4. Լեզվագիտություն: Ոտար լեզուների բառարաններ: Քերականություն հայոց, ոռոսաց և ուրիշ լեզուների:

5. Մատեմատիկա և բնագիտություն: Աստղաբաշխություն: Ֆիզիկա: Քիմիա: Ցերկրաբանություն: Կյանքի ծագումը: Կենդանիների և բույների ժամանակակիցներ:

6. Գործնական գիտություններ: Բժշկություն: Տեխնիկա: Գյուղատնտեսություն:

7. Գեղարվեստ: Ճարտարապետություն: Անդրիագործություն: Գեղանկարչություն: Թատրոն: Ցերաֆշառություն:

8. Վիպաքրություն: Դրականության պատմություն: Բննագատություն: Հրապարակախոսություն:

9. Պատմություն: Կենսագրություն: Աշխարհապատմություն:

Բաժանել գրքերը ըստ բաժանմունքների նշանակում և նրանց գառափորել:

Ուրիշ շատ ձեեր կան գրքերը դասավերելու, բայց վերջին ժամանակները թե Ռուսաստանում և թե արտասահմանում ընդունված են գրքերի դասավորման առանորդական սիստեմը: Տասնորդական սիստեմի եյությունն այն է, վոր տասը բաժանմունքից յուրաքանչյուրը իբ հերթին բաժանվում է առար յենթարամնի, յուրաքանչյուր յենթարամն՝ տասը իմբի և այլն:

Գրքի գառափորման համարը համաձայն տասնորդա-

կան սիստեմի գրված են հետեւյալ կերպով: — Նախ զբարձ ե բաժանմունքը ցույց տվող թվանշանը, հետո աջ կողմից՝ յենթարամն ցույց տվող թվանշանը: Յեթե ցանկանում յենք ցույց տալ նաև խումբը, վորին պատկանում է գիրքը, դարձյալ աջ կողմից նշանակվում է խումբը ցույց տվող թվանշանը: Արինիք՝ Արթուր Արնույի զիրքը «Կոմմունայի հանգուցյալները» պատկանում է 9 բաժանմունքին՝ պատմությանը, 4 յենթարամնին՝ Յեփրոպայի պատմությանը, հետեւյալու այդ գրքի համարը պիտի լինի այսպես՝ 944:

Տասնորդական սիստեմի մեջ թվանշանները սկսվում են 0-ից և վերջանում 9-ով:

Միջակ գրադարանների համար կարելի է առաջարկել և գործադրություն հետեւյալ յենթարամներն ու խըմբերը:

#### 0. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

01. Մատենախոսություն: Գրացուցակներ պրագարանների և հրատարակչական ձեռնարկների:

02. Գրադարանագիտություն:

028. Լովագույն գրքերի գրացուցակներ: Խորհուրդներ ընթերցողներին:

03. Հանրագիտական բառարաններ:

05. Որացուցներ, տեղեկատու գրքեր:

#### 1. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10. Փիլիսոփայություն:

15. Հոգեբանություն:

17. Բարոյագիտություն:

#### 2. Կ Ր Ո Ն

20. Կրոնի փիլիսոփայություն: Քրիստոնեական վարչապետություն: Յեկեղեցու անջատումը պետությունից:



Պայքար կրոնական նախապաշտունքների դեմ: Յեկեղեցին և հասարակությունը: Կրոնի պատմությունը: Ռազմ կրոններ:

### 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30. Սոցիոլոգիա: Հանրական կյանքի որենքները: Գետության ծագումը. պատմական մատերիալիզմ:

31. Վիճակագրություն, վորի մեջ մտնում ևն ծրագրները և վիճակագրական նկարները (diagramma):

32. Քաղաքականություն: Միջազգային հարաբերություններ. բուրժուազիայի քաղաքական կուսակցությունները, նրանց ծրագրները և աշխատանքի կազմակերպությունը: Ազգային հարցը զանազան յերկրներում: Համապետական բնույթ ունեցող ազիտացիա և պրոպագանդա:

33. Քաղաքանութեառություն: Տեսություն քաղաքանութեառության. կազիտալիզմ, իմպերիալիզմ, գաղութներ: Բանկեր: Ֆինանսներ: Գետական բյուջեն:

331. Բանվորական կազմակերպություններ: Արեստակացական միություններ և նրանց դերը արդյունաբերության մեջ: Բանվորական շարժումը զանազան յերկրներում: Բանվորների տնտեսական դրությունը, Կանանց և յերեխաների աշխատանքը: Աշխատանքի առողջապահությունը: Գործարանական կոմիտեներ:

333. Գյուղատնտեսության կազմակերպումը: Հողի աղջանացումը և սոցիալիզացիան: Հողագործական կոմունաներ և արտելներ: Խորհրդայիններ:

334. Կոոպերացիա: Աշխատավորական միություններ: Արտադրողական, սպառողական, գյուղատնտեսական և վարկային կոոպերացիաներ: Անհրաժեշտ նյութերի բաշխումը Խորհրդային Ռուսաստանում և Հայաստանում: Սպառողական կոմունաների միություններ:

335. Սոցիալիզմ: Անարխիզմ: Սոցիալիզմին վերաբերյալ ընդհանուր հարցեր: Ուտոպիստական և զիտական առցիալիզմ: Սոցիալական ուսմունքների պատմություն: Ռուաշին և յերկրորդ ինտերնացիոնալի պատմությունը: Մայս 1:

3354. Կոմմանիզմ: Կոմմանիստական կուսակցությունների ծրագրը: Կոմմունիստական ինտերնացիոնալ: Կոմմունիստական կուսակցությունների համագումարների հաշվեավություններ: Կարլ Մարքսի, Ֆրիդրիխ Ենգելսի և Կոմմունիստական կուսակցության ներկագործիչների կենսագրությունները: Կոմմունիստական յերիտասարդության միություն: Կոմմունիզմի ագիտացիա և պրոպագանդա (կուսակցական ուսումնարաններ, ակումբներ, գրադարաններ):

338. Արդյունաբերության դրությունը զանազան յերկրներում: Արդյունագործության կազմակերպությունը Խորհրդային Ռուսաստանում: Բանվորական հսկողություն և բանվորական վարչություն: Ժողովրդական տնտեսության խորհրդի գործունեությունը: Շաբաթուրյակներ: Աշխատազորք (բրյուգայության մեջ):

34. Իրավունք: Խորհրդային Ռուսաստանի սահմանադրությունը: Խորհրդավայան ֆելերատիվ հասարակետությունների սահմանադրությունը: Խորհրդային իշխանության վերաբերյալ տեսական ինդիքներ: Դատաստան: Հեղափոխական Տրիբունալ: Իրավունքի վիճակությունը: Սահմանադրության եռությունը: Որենքների, գեկքեռների և կարգադրությունների հավաքածու: Կառավարական ձեռները զանազան յերկրներում:

35. Ինչպես պեաք և կառավարել և պաշտպանել մի հասարակություն: Խորհրդային իշխանության գործառնությունը: Բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամագորների խորհուրդ: Խորհուրդ

ների կենարոնական գործադիր կոմիտե։ Խորհուրդների համազումարներ, Փողովրդական կոմիտարների՝ Առժողկոմատի, Լուսաժողկոմատի և այլն համագումարներ, Փողովրդական կոմիտարների խորհուրդներ։ Հականեղուփոխության դեմ կովող Արտակարդ Հանձնաժողովը, Կարմիր բանակը և նավատորմը։

37. Կըթություն և լուսավորություն։ Մանկավարժության վերաբերյալ ընդհանուր հարցեր։ Մանկավարժության պատմությունը։ Մանկավարժական հոգեբանություն։

371. Դպրոցական գործ։ Միասնական աշխատավորական դպրոցներին վերաբերյալ ընդհանուր հարցեր։ Դասավանդության կազմակերպումը և մեթոդները։ Ուսուցչական կազմ։ Աշխատանքներ պատահնիների մեջ։ Մանկական ակումբներ։

372. Ոժանդակիչ ձեռնարկներ միասնական աշխատավորական դպրոցներում դասավանդելու համար։ Նոխա-դպրոցական կրթություն։ Մանկապարտեզ։

373. Ոժանդակիչ ձեռնարկներ յերկրորդ աստիճանի միասնական աշխատավորական դպրոցներում դասավանդելու համար։

374. Մեծերի կրթությունը և ինքնակրթությունը։ Փողովրդական տներ, ակումբներ, ուսումնարաններ չափահանների համար և լուսավորական գործունեություն այլ յեղանակներ։ Անդրագիտության վերացումը։ Կոչ գրադեաների։

375. Բարձրագույն դպրոց։

379. Դեկրետներ, որենքներ և կարգադրություններ ժողովրդական կրթության վերաբերյալ։ Հասարակությունը և կրթությունը։

38. Տրանսպորտ։ Փոստ։ Հեռագիր։ Յերկաթուղի և հաղորդակցության այլ ուղիներ։ Զավեր։ Կշիռ։ Սպառանքների փոխանակում այլ պետությունների հետ։

#### 4. ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

40. Առնասարակ լեզուների մասին, հայոց լեզու, ստար լեզուներ։

49. Ռուսաց լեզու, այբբենարան, քերականություն, բառարաններ սուսական բառերի և ռուսերենի մեջ մրտած ստար բառերի։

#### 5. ՄԱՏԵՄԱՏԻԿԱ ՅԵՎ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

50. Բնագիտությունց պատմությունը և փիլսոփայությունը (ընդհանրապես բնագիտության վերաբերյալ գրքեր)։

51. Մատեմատիկա (թվաբանություն, հանրահաշիվ, յերկրաչափություն, յնուանկյունաչափություն)։

52. Աստղաբաշխություն (գործնական, տեսական և նկարագրական աստղաբաշխություն, քարտեզներ, գեղեցիկա)։

53. Ֆիզիկա (Մեքենաբանություն, էեղուկներ, գագեր, ձայն, լույս, ջերմություն, ելեկտրականություն, մագնիսականություն)։

54. Քիմիա (տեսական և գործնական քիմիա։ վորակական և քանակական վերլուծություն, որգանական և անօրգանական քիմիա, բյուրեղագիտություն, հանքարանություն)։

55. Յերկրաբանություն (ֆիզիկական աշխարհագրություն, մթնոլորտաբանություն, Յեվրոպայի և այլ յերկրամասերի յերկրաբանություն)։

56. Հնելաբանություն (հանածու և անհետացած կենդանիների և բույսերի մնացորդներ)։

57. Կենսաբանություն (մարդը քարե գարում, մարդկային ցեղերը, մարդու ծագումը, կենդանիների տեսակների ծագումը, Դարվինի տեսությունը, կյանքի սկիզբը, բջիջ, մանրադիտակ)։

58. Բուսաբանություն (բույսերի կազմը և կենսագործառները, բույսերի կյանքը):

59. Կենդանաբանություն (կենդանիների կազմը և կենսագործարանները, կենդանիների կյանքը):

## 6. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

60. Գործնական գիտությունների պատմությունը (տեխնիկա, ընդհանուր տեսություններ և առհասարակ գործնական գիտությունների վերաբերյալ զրգածքներ, գիտության բոլոր ճյուղերին վերաբերյալ ցուցահանդեսներ):

61. Բժշկական (մարդակազմություն, բնախսություն, առողջապահություն, հիվանդություններ, դեղեր, վիրահատություն (չիրորգիա), անասնաբուժություն):

62. Մեքենագիտություն. Խնմիներական արվեստ (մեքենաներ, շոգեմեքենաներ և կաթսաներ, ելեկտրարվեստ, հանքային գործ, հանքեր, արվեստակերտ կառուցվածքներ զինվարական և ծովային, կամուրջներ, յերկաթուղիներ, ջրուղիներ, նավահանգիստներ, ջրանցքներ, կույուղիներ, վառարաններ, լուսավորություն, ոդանցքներ, ավտոմոբիլներ, ջրատույզ նավեր, սավառնակներ և այլն):

63. Գյուղատնտեսություն:

631. Հող. պարարտացում:

632. Բույսերի հիմնդություններ, վասարեր կենդանիներ բույսերի համար և այլն:

633. Հողագործություն, խոտաբուծություն, մարդաբուծություն:

634. Շառերի և թփերի մշակումը. անտառաբուծություն, պտղատու պարաեզ, այգիներ:

635. Բանջարանոցներ և ծաղկանոցներ:

636. Անասնաբուծություն և թռչնապահություն:

637. Կաթնառանտեսություն:

638. Մեղվաբուծություն, շերամապահություն:

639. Զենաբուծություն, ձևնորսություն, վորսորդություն:

64. Տան կառավարություն (խոհաբարական արվեստ, կահ-կարասիք, հագուստեղեն, արդ ու զարդ, լվացք, աշմանեղեն, մաքրություն):

Գրասենյակային աշխատանք. (գրասենյակի կազմակերպումը և աշխատանքը. սղագրություն, հաշվապահություն, առեսրական ընդհանուր գիտելիքների ձեռնարկներ):

655. Գրքի գործ և հրատարակչություն:

66. Քիմիական արդյունագործությունը (քիմիական արտադրություններ՝ խմիչքներ, շաքար, հաց թխելը, պանրի «մայա», կրախմալ, լուսատու գաղ, կերսուին, սապոն, ապակի, լաք, թանաք, մետաղագործություն, մետաղների փորձում: Կավագործություն:

67. Գործարանական արդյունաբերություններ. (իրեր՝ թանկագին մետաղներից, յերկաթից, պողպատից, պղնձից, և այլն, փայտի և կաշվի մշակում, թղթի արտադրություն, գործվածքների արտադրություն, ոետինից և ցելուլուղից պատրաստած իրեր):

68. Արհեստներ. (ժամանակագործություն, գարբնական պատրաստություն, կառքագործություն, կոշշկակարություն, թամբաղործություն, կազմարարություն, զերծակություն, վարսավիրություն, խաղալիքներ ուստարաստելը, ձեռագործի և արհեստների ձեռնարկներ սիրողների համար):

69. Շենքեր կառուցանելը (շինարարական նյութերի ուսումնասիրություն, հատակագիծ, նախահաշիվ, քարի աշխատանքներ, բետոնի և փայտի գործ, ձեղուագործություն, ներկարարություն, աղակի քցելը, պասիպաստաներ):

## 7. ԳԵՂԱՐՎԵՍ

70. Գեղարվեստի տեսությունը, փիլիսոփայությունը: Գեղագիտություն: Գեղարվեստի վերաբերյալ ընդհանուր յերկեր: Թանգարաններ: Պատկերադարձաններ: Մառաստանների մշակումը: Լճակներ: Շատրվաններ, հովանոցներ: Գրապահություն: Վիմագրություն: Պլակատներ: Աֆիշներ:

72. Ճարտարապետություն (արեւելյան և անտիք ճարտարապետություն, գոթական ճարտարապետություն, մավրիտանական ճարտարապետություն, վերածնունդի և նոր ճարտարապետություն, հասարակական շենքերի, յեկեղեցիների և մասնավոր տների ճարտարապետություն. դրագները ճարտարապետության մեջ, բելինֆոներ և այլն):

73. Անդրիագործություն (ծիփագործ (լեռկա) գեղարվեստական կավագործություն, նյութեր, աշխատանքի յեղանակներ, հին անդրիագործությունը՝ հռոմեական և հռոմեական, միջնադարյան և նոր անդրիագործություն, գեղարվեստական իրեր բրոնզից, կոփածո իրեր և այլն),

74. Գէագրություն: Եեկորատիվ արվեստ (յերկրաշտական և արվեստագիտական գծանկար. հեռանկար, նկարչություն, գորգերի, ժամացաների և ասեղնագործության նախշեր, սենյակների ներքին զարգարանք, գեղարվեստական կարասիք):

75. Գեղանկարչություն (պատկերներ, գեղանկարչության նյութեր և յեղանակներ, ներկեր, յերանգավորում, դյուցազներգական, դիցութանական և իդեալիստական գեղանկարչություն, կենցաղական և այլն):

77. Լուսանկարչություն. (նյութեր, լուսանկարչական քիմիա, փոտոցինողագիւռ, ֆոնոդրավյուրաներ, լուսանկարների հավաքածու):

78. Յերաժշաություն, յերգեցողություն և նրա արվեստը: Ոպերային յերաժշտություն: Խմբական յերգեցողություն: Որկեստը. (լարավոր և շնչառնչյուն յերաժշտական գործիքներ):

79. Զվարճալիքներ. թատրօն. (հանրային առնակատարություններ և հանգեսներ: Խաղեր: Շախմատ: Սպորտ: Զի հեծնելու արվեստը):

## 8. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

80. Գրականության մասին ընդհանրապես: Զանազան ազգերի ու յերկրների գրականությունը: Գրականության առաջնական արվեստը: Գրական յերկերի ժողովածուներ:

801. Վոգեխոռ ընթերցանություն (възрастительное чтение): Վոգեխոռ և ճаրտասանության արվեստը:

82. Անգլիական գրականություն:

83. Գերմանական գրականություն:

84. Ֆրանսիական գրականություն:

85. Ռուսաց գրականություն:

## 9. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

90. Պատմության փիլիսոփայությունը: Կուլտուրայի պատմություն, զանազան յերկրների ու ազգերի պատմություն:

93. Հին աշխարհի պատմություն:

94. Յեգրոպայի պատմությունը՝ միջին և նոր դարերում:

942. Անդրիայի պատմությունը: Անդրիայի աշխարհական շարժումները Գերմանիայում:

944. Ֆրանսիայի պատմությունը: Հնդագիտական շարժումները Ֆրանսիայում:

947. Ռուսաստանի պատմությունը: Հեղափոխական շարժումները Ռուսաստանում:

91. Նոր աշխարհների գյուտերի պատմությունը ձանապարհորդություններ բոլոր յերկրներում:

912. Քարտեզներ:

914. Յեվրոպայի աշխարհագրությունը

9147. Թուսաստանի և Հայաստանի աշխարհագրությունը:

### 915. Ասիայի աշխարհագրությունը

### 916. Աֆրիկայի աշխարհագրությունը

919. Ավատըտիքայի, Ովկիանիայի և Բենոային  
յերկրների աշխարհագրությունը:

Յուրաքանչյուր բաժանմունքում, յենթարաժնում և  
խմբում գրքերը դարձիներում կամ պահարաններում  
պիտի դասավորված լինեն հեղինակների անունների այբ-  
բենական կարգով, ուստած ա տառից, հետո՝ թ, հետո գ  
տառը և այլն։ Կարող է պատահել, վոր մի քանի հեղի-  
նակների անուններ սկսվեն միենույն տառով, որինակ՝ Գու-  
գոլ, Գորկի, Գոնչարով, Գեոթե։ Այդպիսի դեպքերում ի  
նկատի ե առնվում անվան յերկրորդ տառը և զրքերը  
դասավորվում են յերրորդ տառի համեմատ։ Ցեթե յերկ-  
րորդ տառերն ել միատեսակ լինեն, այն ժամանակ դա-  
սավորությունը կատարվում ե յերրորդ տառի համեմատ  
և այլն։ Ընթերցազներից յետ ստացված զրքերի այդ յե-  
զանակով դասավորումը շատ ժամանակ ե խլում զրա-  
դարանապետից, այդ պատճառով մեծ զրադարաններում  
գործ ե ածվում այսպիս կոչված «հեղինակների աղյու-  
սակը», վոր հնարել ե ամերիկացի Կոստաերը։ Շատ ցան-  
կալի յե, վոր յուրաքանչյուր զրադարանապետ ձեռք բե-  
րի այդ աղյուսակները։ Թե ինչպես պիտի նրանց գոր-  
ծադրել և ինչի յեն պետք նրանք, այդ բոլորը բացատր-  
ված են աղյուսակների նախաբանում։ Յյդ աղյուսակնե-  
րը առանձնապես պիտանի և ոգտակար են. ոռմաններ,  
վեպեր և պատմվածքներ, այսինքն գեղարվեստական գր-

BIBLIOGRAPHY NO. 1

## Աղյուսակ № 2.

Քառամսնայի հատիկ մեծ և միջակ գրադարանների

ԶԼՈՒԹՅՈՒՆ

Տարբ.	Համահասակի	Համ պարապման	Համ կը թության	Համ անհի	Համ հետազոտություն միջնական գործողություն
Ամիս	Բարեկայական	Ամառակայական	Ամառակայական	Ամառակայական	Ամառակայական
1. Բաժմանորդների թիվը	Բաժմանորդների թիվը				
2. Աշխարհացիւ սերմեններ					
3. Պակասի					
4. Բաժմանորդների թիվը	Բաժմանորդների թիվը				
5. Գրադարան այցելող հերթինքների թիվը					
6. Ընդունաւուն այլին լորութիւնների թիվը					
7. Գրքերի բանակը քառամսնական ամսաթափների թիվը	0	1	2	3	4
8. Ակնեացիւ թիվը					
9. Գաղացիւ թիվը					
10. Գրքերի բանակը քառամսնական ամսաթափների թիվը	0	1	2	3	4
11. Տրված գլուխի քառամսնական ընթացքում	0	1	2	3	4
12. Ցուցիչ աշխատությունների թիվը (այլանութիւնների թիվը)	0	1	2	3	4
13. Լույսից ըստ ձեռակության աստիճաններում (այլանութիւնների թիվը)	0	1	2	3	4
14. Գրադարանի բարեկայական գործունեությունների թիվը (այլանութիւնների թիվը)	0	1	2	3	4

Աղյուսակ № 3.	Աղյուսակ № 4.	Աղյուսակ № 5.	Աղյուսակ № 6.	Աղյուսակ № 7.	Աղյուսակ № 8.	Աղյուսակ № 9.	Աղյուսակ № 10.
1. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
2. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
3. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
4. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
5. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
6. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
7. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
8. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
9. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							
10. Տրված գլուխի քառամսնական ընթացքում							

Զարգացման ամիսն ամիս վեց  
ըստ պիլք կերպության

քեր դասավորելու համար, վորովինետե այդ տեսակ գրքերի մեջ հաճախ են պատահում միենույն տառով սկսվող հեղինակների մի քանի անուններ: Գիտական գրքերը կարելի ե դասավորել և առանց կետութերի աղյուսակի ոգության: Բաժանմունքների համարը և գույքամատյանի համարը պիտի նշանակված լինեն գրքի առաջին յերեսի վրա, բայց վոչ գրքի շապիկի վրա կամ բոլորովին մոտ գրքի լեզվին, վորովինետե սովորաբար գրքի յեզրը քըքըվում ե և համարը կորչում: Բաժանմունքի համարը պիտի նշանակել նաև գրքի մեջքի վրա (կօրշօկ), վորպեսզի գրադարաննապետը հեշտությամբ կարողանա ստուդել՝ կանոնավոր են դասավորված գրքերը թե վոչ: Գրքի մեջքի վրա նշանակված պիտի լինեն նաև հեղինակի անվան առաջին յերկու տառերը:

### 3. ԳՐԱՑՈՒՑԱԿ

Մեծ և լավ կազմոկերպված գրադարանում, բայց գոյքամատյանից, պիտի լինի նաև գրացուցակ այն գրքերի, վորոնք առաջարկվում են ընթերցողներին կարդալու: Ամենալավ գրացուցակը այն զրացուցակն է, վորի մեջ գրքերը բաժանված են ըստ բաժանմունքների և յուրաքանչյուր բաժանմունքի մեջ նրանք դասավորված են ըստ հեղինակների անունների:

Գրացուցակը կարող ե գրված լինել մի տեսրակի մեջ կամ առանձին առանձին քարտերի վրա: Այդ դեպքում յուրաքանչյուր մի գրքին վերաբերյալ տեղեկությունները գրվում են մի առանձին քարտի վրա: Գրացուցակ կազմելու ձեր պիտի դերադասելի համարել, վորովինետե գրադարանում նոր գրքեր ավելանալիս, գրանցից յուրաքանչյուրի քարտը կարելի ե դնել համապատասխան բաժանմունքը ալբենական կարգով, իսկ տետրակում գրած ժամանակ նախ՝ յուրաքանչյուր բա-

ժանմունքին յատկացրած տեղը կարող ե բավական չի-նել, յերկրորդ՝ տետրակի մեջ նորանոր գրքեր մտցնելիս անհնար կիմնի պահպանել այլքենական կարգը: Տետրա-կի մեջ գրված գրացուցակը փորոշ յարմարություններ և տալիս միայն գրքնը վնատըելիս:

Բարտային գրացուցակը կազմելիս յուրաքանչյուր քարտ կարելի ե կազմել հետեւյալ որինակի համաձայն:

	ՄԱՐԹՍ ՅԵՎ ԵՆ ԳԵԼՍ
3354	
№ 27	Կոմմունիստական կուսակցության մանի-ֆեստը: Բուրժուաներ և պրոլետարներ: Պրո-լետարներ և կոմմունիստներ: Կոմմունիստ-ների վերաբերմունքը գեպի այլ և այլ ընդ-դիմադրական կուսակցությունները: Հրատա-րակչությունը
№ գոյ-քամատ.	(տեղը)
2596	(տարեթիվը) 78 յերես, (գինը)

Զախ անկյունում նշանակվում ե բաժանմունքը, յենթաբաժինը, խումբը, յենթախումբը: Նրա տակը նշանակվում ե հեղինակի շիֆրը, այսինքն հեղինակի ան-վան սկզբնատառը, և համապատասխան թվանշանը ըստ կեռտարի աղյուսակի: Վերը, առաջին տողում գրվում ե հեղինակի աղյուսակը, նրա ներքե՞ւ՝ գրքի անունը համառոտ բովանդակությամբ, հրատարակության տեղը, թիվը, յերեսների քանակը, գինը և այլն: Զախ կողմից ներքում նշանակվում ե նաև գույքի մատյանի համարը: Յեթե գերը գրելուն մատնակցել են յերկու հեղինակ, գասագործան ժամանակ գիրքը տեղափորում են առաջին հեղինակի անվան համաձայն, քարտեր կազմում են յեր-կու հատ՝ ամեն հեղինակի անվան տոանձին: Որինակ շկոմմունիստական մանիֆեստից համար պետք ե լինի

յերկու քարտ՝ մեկը Մարքսի, մյուսը Ենդելսի անվան:  
Այսպես:

3354	ԵՆ ԳԵԼՍ ՅԵՎ ՄԱՐՔՍ
№ 27 (Ե. 63)	Կոմմունիստական կուսակցության մանիքստը: Բուրժուազները և պրոլետարները: Պրոլետարները և կոմմունիստները: Կոմմունիստների վերաբերմունքը դեպի այլ և այլ ընդդիմազդական կուսակցությունները: (Հրատարակչություն) (տեղը) ..... (տարեթիվը) ..... 78 յերես, (գինը) .....

Յեթե գրքի վրա չկա հեղինակի անունը, ինչպես որինակ գրական ժողովածուներն են, գրքի անունը գրքավում է հեղինակի անվան տեղ:

Յեթե գրքի վրա կա միայն խմբագրի անունը, ոյն ժամանակ հեղինակի անվան տեղ գրվում է խմբագրի անունը: Որինակ՝

01	ՎԱՐԻՍԼԱՎԵՎԻ ԽՄԲԱԳՐ.
Վ. 57	Որինակի գրացուցակ գրական յերկերի 1912 թվի
Քամատ. 8410	Դասավորված եւ տասնորդական սիստեմով. Հրատարակչություն «Հայկա» № 1913. 312 յերես:
	Յ որինակ

### Յ որինակ

Բոլոր քարտերը պիտի դարսել արկոի մեջ, կորի այնությունը և բարձրությունը քիչ ավելի պիտի լինի,

Այս նշինան  
մտի գ բան  
զա գուցի

Դ հ ո ք ը լ ս ։ Ժ ե լ լ լ ս ։ Ա լ լ դ ա ծ	Ա Մ բ Ս	Ո ւ ե ր
Դ հ ո ք ը լ ս ։ Ժ ե լ լ լ ս ։ Ա լ լ դ ա ծ	Գ ր ք ի ա ն ո ւ ն ը	Հ ե լ լ ի ն ա կ
Դ հ ո ք ը լ ս ։ Ժ ե լ լ լ ս ։ Ա լ լ դ ա ծ	Գ ր ք ի ա ն ո ւ ն ը	Հ ե լ լ ի ն ա կ
Դ հ ո ք ը լ ս ։ Ժ ե լ լ լ ս ։ Ա լ լ դ ա ծ	Ո ւ ե ր	Զ ա կ ա մ ա ն ե ց ե ն ո ւ ն ը
Դ հ ո ք ը լ ս ։ Ժ ե լ լ լ ս ։ Ա լ լ դ ա ծ	Ո ւ ե ր	Զ ա կ ա մ ա ն ե ց ե ն ո ւ ն ը

Այդպմտուց զգացնում են այս

# Շարժական գրադարանի ընթերցողների ցուցակը

Տեսական գրքեր	Աշխատանքի տեղի հասցեն	Համելոցով	Մանութեալիուն
Վեբսայթ	Աշխատանքի տեղի հասցեն	առաջնական	հասցեն
առվարի			
Զբաղմանք			
Ժմանց	Շատզմոբաց վաղահանգամբոց		
Արդարուն, անուն			
Գետուն			
Տեսական գրքեր			
Տեսական գրքեր			

բան քարտերի լայնությունն ու բարձրությունը, իսկ յերկարությունը կարռղ ե լինել կես արշին կամ մի քիչ ավել:

Յեթե գրադարանում մինույն գրքից մի քանի որինակ կա, այն ժամանակ զույքի մատյանում, որինակների քանակը ցույց տվող սյունյակում պետք ե գրել որինակների թիվը, վորը նշանակվում և նույնպես քարտի մեջ, աջ անկյունում:

Պարզ ե, վոր բոլոր որինակների շիֆրը (վ. 57), ինչպես և զույքամատյանի № (8410) նույնը ոլիտի լինի բոլորի համար:

## 4. ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ԳԻՐՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ.

Գրադարանից ընթերցողներին գիրք տալիս գրադարանապետը իր մոտ պիտի նշանակի, ում ինչ գիրք ե տված: Շատ գրադարաններում այդ տեղեկությունները զրված են մի տետրակի մեջ և յուրաքանչյուր ընթերցողին յատկացվում ե մի յերես, վորի համարը նա պիտի հիշի: Գիրք փոխելիս ընթերցողը յայտնում է իրեն հատկացրած յերեսի թիվը, զրադարանապետը չնշում է վերագարձրած գրքի անունը, քաշելով վրայից բարակ գիծ, և զրում ե նոր տրված գրքի անունը:

Բայց տետրակի գործածությունը այդ նպատակի համար ունի իր բավականին մեծ անհարմարությունները անդամ վոչ մեծ գրադարանների համար: Պատահում ե, վոր մի ընթերցող ավելի շատ գիրք ե կարգում, քան կարելի ե տեղափոխել նրանց անունները մը յերեսում: Բացի զբանից, գրադարանից տրված գրքերի այդ ձևով նշանակելը պարզ ցոյց չի տալիս ով և զիրքը պահում նշանակած ժամանակից ավելի և վորքան ժամանակ ավելի: Այդ նպատակին համար համար յուրաքանչյուր ընթերցողին հատկացնում են առանձին քարտ համաձայն հետեւյալ որինակի:

Աղքանուն		Ակնուն
Հասակ	Կրթություն	
Զբաղմունք		
Զբաղմունքի տեղի հասցեն		
Տան հասցեն		
Բաժանորդ գրվելու թիվը		

Քրքը	Խոսքը	Հեղինակի և գրքի անուն	Դիրքը ստանությունը	Մանոթություն

Այս գլխի վերջում հարկ ենք համարում ոահմանել մի քանի հիմնական կանոններ, վոր պիտի գործադրել որպարանից դիրք տալիս:

1. Գրքերից ոգտվում են ձրի:

2. Յուրաքանչյուր բաժանորդ կարող է ստանալ միաժամանակ յերկու զրքից վոչ ավելի, վորոնցից միայն մեկը կարող է վեպ լինել:

3. Գիրքը կարելի է պահել միայն յերկու շաբաթ: Յեթե այդ ժամանակվա ընթացքում զրքի ընթերցումը չի ավարտվել, կարելի է նույն գիրքը կրկին անդամ գրել տալ յերկու շաբաթ ժամանակով:

4. Բոլոր ընթերցողները իրավունք ունեն մոռենալ դարձներին գրքեր ջակելու համար:

5. Գիրքը կորցրած ժամանակ ընթերցողը պարտավոր է հատուցանել նրա արժեքը:

## 5. ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գրադարանի կյանքի մեջ վիճակագրությունը մեծ նշանակություն ունի: Նա գաղափար է տալիս, ինչով են հետաքրքրվում ընթերցողը, վորքան արդյունավետ են ընթանում գրադարանի աշխատանքները, ովքեր են գրադարանի ընթերցողները: Առանց վիճակագրության վոչ գրադարանի աշխատանքները կընթանան կանոնավոր, վոչ ել կարելի կրկին հաշիվ կազմել այդ աշխատանքների մասին: Յուրաքանչյուր ամիս կարելի է բավականական այն տեղեկություններով, վորոնք իրեն գումար ստացվում են ամենորյա վիճակագրական տեղեկություններից, ավելացնելով զրան գրադարանի զրքերի ընդհանուր քանակը, իսկ յուրաքանչյուր որ անհրաժեշտ է կանոնավոր կերպով լցնել համապատասխան տեղեկություններով № 1 աղյուսակը (տես յերես. 27):

Տարվա յուրաքանչյուր քառամյակի համար պետք է մահրամասն հաշիվ կազմել, զեկավարվելով հետեւյալ որինակով.—

1. Գրադարանի հասցեն (գրավոր հաղորդակցության համար):

2. Ինչ աղբյուրներից են լրացվում գրադարանի գրքերը:

3. Գրադարանին կից կազմակերպվել են արդյուք ընթերցումներ, զեկուցումներ և այլ հավաքույթներ:

Ինչ է արվել վոր լավ զրքերի մասին բոլորը տեղեկություն ունենան և հետաքրքրվեն նրանով:

4. Գույցություն ունեն արդյուք զրադարանին կից ընթերցողների խմբակներ:

5. Քանի անդամ քառամյակի ընթացքում կատար-

վել են գրքերի փոխանակություններ ուրիշ գրադարանների հետ:

Բացի վերոհիշյալ հարցերից առաջին հաշվետվության մեջ պետք է նաև նշանակել, —

1. Գրադարանը կազմելիս գրքերը առաջին անդամ վորտեղից են ստացվել:

2. Քոնի գրադարանապետ կա գրադարանում, և կա արդյոք նրանց մեջ գրադարանագիտությունը մասնագիտորեն ուսումնասիրած անձն:

3. Կան արդյոք գրադարանում գրացուցակ և գույքի ժամանակ:

Յուրաքանչյուր քառամյակի հաշվետվության համար պետք է տեղեկություններ տալ նաև համաձայն № 2 աղյուսակի (տես յերես 28)

## ՇԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՅԵՎ ԽՐՃԻԹ—ԸՆ- ԹԵՐՅԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

Խրճիթ ընթերցարանի համար կազմած շարժական գրադարանում լինում ե սովորաբար 150—200 կտոր գիրք, վորոնք յուրաքանչյուր 2—3 ամսից հետո փոխարինվում են նույն բանակի այլ գրքերով։ Խրճիթ-ընթերցարանների այդ պայմաններին ել պիտի համբավատախան լինի նրա ներքին կազմակերպությունը։ Յերբ գրադարանը մի տեղից տեղափոխվում է մյուս տեղը, ցուցակը լուսական և գրքեր բաշխելու քարտային սիստեմը պիտի համարել աննպատճաճարմար։ Վիճակադրական տեղեկությունների հավաքումը վերը ցույց տված եղանակով նույնպես անիրազործելի ե։ Շարժական գրւարանների համար ընդունված ե նշանակել մինույն թերթի մեջ զրքերի գույքազբումը, ցուցակագրումը և բաշխումը ընթերցողներին կտրդալու համար։ Յեզ այդ բոլորը պիտի նշանակել այնպես, վոր հեշտ ու հարմար լինի նրանց

գումարել ցանկալի վիճակադրական տեղեկությունները ստանալու համար։ Տեսրակի արդարությունը մի յերեսի որենակը բնորված ե. 33 յերեսում։

Այդ թերթի վրա գրադարանի բոլոր գրքերը գրվում են այբբենական կարգով ընդհանուր բաժանմունքի գրքերը (0), հետո յերկրորդ բաժանմունքի գրքերը (1), հետո՝ յերրորդ և այլն։ Սյդպիսով թերթը միաժամանակ, ներկայացնում ե սիստեմատիք գրացուցակ և գույքամատյան։ Փոքրիկ աղյուսակների մեջ պետք է նշանակել ամսաթվերը, վոր որը աշխատել ե գրադարանը և գիրք ե տվել ընթերցողներին։ միմյանց յետեկից բոլոր որերը նշանակելու կարել չկա, այլ պիտի նշանակել միայն այն որերը, յերբ աշխատել ե գրադարանը։

Գիրք տված ժամանակ կողքի համապատասխան սյունեակում պետք է նշանակել բաժանորդի համարը, իսկ փոքրիկ սյունյակներում նույն տողի վրա պետք ե նշանակել ամսաթվիվ։ Տված գրքի այդ եղանակով նշանակելը հարավորություն ե տալիս հեշտությամբ իմաստու, ով և ինչ գիրք նշանակած ժամանակից ավելի ե պահել։

Երբ գիրքը վերադարձնել են, բաժանորդի համարի վրա գիծ ե քաշվում։ Եթե պատճի, վոր ամսվա ընթացքում գրադարանը ափելի շատ որ աշխատի, բայց ամսաթիվ նշանակելու համար աղյուսակներ չկան թերթի մեջ, այն ժամանակ կարելի ե թերթի այդ մասի վրա կպցնել մի նոր նման ձեռվ տողած թերթ և շարունակել զրել նրա վրա հետեւալ ամսաթվերը։ Թերթը ամբողջովին չպետք է կպցնել, այլ միայն նրա վերին ծայրը, նախկին թերթի այն շերտի վրա, ուր զրված ե առմիսա, վորտեսազի ննար լինի թերթը բարձրացնել։ Այդպիսի թերթեր կարելի ե կպցնել երկու կամ երեք հատ, երբ զրադարանը ամբողջ կազմով փոխադրվում ե ուրիշ

Խրճիթ-ընթերցարան, ուր գրքերից ողտվողները նոր մարդիկ պիտի լինեն, այն ժամանակ գրքերը հրահց պիտի ցուցակագրվեն ու գույքագրվեն վերը ցույց աված եղանակով:

Վերջին աղյուսակը՝ «Քանի անգամ ե կարդացել գիրքը» անհրաժեշտ ե վիճակագրության համար: Այդ աղյուսակում յուրաքանչյուր գրքի հանդեպ գրված թիվը ցույց պիտի տա, թե քանի անգամ ե կարդացվել այդ գիրքը: Դումաբելով այդ թիվը ըստ բաժանմունքների, գրադարանապետը գաղափար ե կազմում, թե որքան գիրք ե արված յուրաքանչյուր բաժանմունքից: Այդ տեղեկությունները տալիս են ճշգրիտ ու բնորոշիչ պատճենը գրադարանի գործունեյության: Շարժական գրադարանի գործը վարելու համար անհրաժեշտ ե նաև իմանուլ, գրադարանը փորձան ընթերցող ունի և ովքեր են գիրք կարդացողները: Դրա համար պետք ե նունենալ ընթերցողների ցուցակ, վորի մեջ կան մի քանի հարկավոր տեղեկություններ ընթերցողների մասին: Այդ տեսակ թերթի որինակը բերված ե 34-դ երեսում: Այդ թերթում ընթերցողները նշանակված են միմյանց յետելից ժամանակագրական կարգով:

Հստ կարգի դրած համարները կլինեն ժիաժամանակ և ընթերցողների համարները:

### ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ՅԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Գրադարանի շենքը պիտի լիսի մաքուր և լուսավոր, փորձան կարելի ե ընդամակ, վարպեսզի գրքի պահանջներ շարժած լինեն պատճերի երկարությամբ:

Տանկալի ե, վոր ընթերցարանը առանձին սենյակում լինի: Դրա արանապետը ամեն ջանք պատի գործ դնի վոր եր գրադարանը փոխնորդ չնմանի դիմանատան՝ փոչ ըներքին աշխատանքներուն է առ առ առ:

Փափուկ կան կարասիք կամ բաղմածալ վարագույթներ գրադարանում, պարզ բան ե, չպետք ե լինեն: Նրանք դառնում են փոշու բուն, վոր փշացնում ե գրքերը: Բայց չափազանց կարելիք ե, վոր գրադարանը զարդարված լինի առաջարկվելիք գրքերի գեղանկար ցուցակներով, հեղափոխական գործիչների նկարներով և կամ գեղարվեստական նկարներով և նշանաբաններով՝ կարմիր թերթերի վրա գրած (կարմիր կատորներից պիտի խույս տալ): Այս բոլորը առանձին կենդանությունն ե տալիս գրադարանին և գեղի ինքն ե գրավում ընթերցողներին: Պետք ե առանձին ուշադրություն դարձնել նաև մուտքի գրա: Մուտքը այնպես պիտի լինի, վոր ընթերցողը առանց դժվարության դանի գրադարանը: Մուտքի մոտ պիտի կախված լինի հայտարարություն, վորի մեջ պիտի գրադարանի կարեվորություն, պիտի մեջ պիտի գրքից ու գրադարանի կանոնները և գիրք տալու որերն ու ժամերը:

Գրադարանի շենքը և ներքին կահավորումը պիտի դարձնել վրքան կարելի ե գուրեկան ու հարմար: Պահարանները չպետք ե լինեն վոչ շատ բարձր և վոչ ել խորը: Հնդկունված և ամենահարմաք չափով գրադարանական պահարանների պիտի լինի այսպես՝ շուրջ կես արշին բարձրություն, 1 ու կես արշին լայնություն և վերշոկ խորություն, իսկ գարանների հեռավորությունը միմյանցից պիտի լինի շուրջոկ: Առաջին դարակը հատակից 8 վերշոկ բարձր պիտի լինի: Ներքին դատարկ տարածությունը կարելի յե արկդ դարձնել, վորը շատ պետք կարող ե գալ գրադարանապետին՝ մեջը թանաք, գրիչ, մատիտ, թուղթ և այլն պահելու համար:

Բացի պահարանից գրադարանում պիտի լինի մի մեծ սեղան գրադարանապետի համար, մի քանի աթոռ:

ներ ու փոքրիկ սեղաններ այն այցելուների համար, վորոնք կարդալու զրգեր են ջոկում: Սեղաններից մեկի վրա պետք է դարսել ամենահետաքրքրական զրգերը: Գրադարանի հատակը մաքուր պահելու համար անպատճառ պիտի ունենալ զամբյուղ անպետք թղթերի համար, ավագ լցրած արկդ ծխած պապիրոսների համար և թքաման: Դրզերի պահպանության համար առանձնատես ուշ պիտի դարձնել մաքրության վրա, այդ պատճառով ամենամեծ խնամքով դրզերը շարունակ պիտի մաքրել փոշուց: Գրադարանի հասակը պետք է մոքրել գոչ թե շոր շորով, այլ թաց շորով՝ շպարոսի: Դրզերի պահպանության տեսակետից անհրաժեշտ է, վոր զբաղարանում ուղև միշտ մաքուր լինի, զրա համար ամանելք հաճախ պիտի բաց անել լուսամուսները, իսկ ձմեռը՝ ողանցքը: Բացի զրանից շատ ցանկալի եւ ամառը արևի տակ դրզերը միմյանց խփելով մաքրել փոշուց: Պետք է իմանալ, վոր մշտապես փակ շենքում գտնված փոշու ու կեղտուա գրքերը մըշտական աղբյուր են տարափոխիկ հիվանդությունների, որինակ, թոքախտի, վոր կատարյալ պատուհաս եւ աշխատավոր ժաղովրդի համար:

Եթու ընթերցարանում որքեր չեն պահպում, կարելի եւ այստեղ ունենալ փափուկ կարտոֆիլ, վորագույններ և այլն: Ընթերցարանում պետք եւ ստացվեն գրքան կարելի եւ շատ լրագրեր, իսկ շատ տարածված լրապերից յարաքանչյուրից պիտի ունենալ 4—5 սրբնակի:

Յուրաքանչյուր որ ընթերցարանը այցելողների թիվը վորոշելու համար լավ էլինի մուտքի մի թերթ կողցնել և կողքին մի մատիտ կապել: Ներս մասնից յուրաքանչյուր ընթեցող պիտի ստորագրի իր անունը: Յեթե զրադարանը հնարափորություն ունի զրա համար հատուկ ծառայող պահելու, այն ժամանակ նրան պիտի հանձնարարել ներս մտնող ընթերցադների անունները նշանակել:



025  
9-52